ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2025 թվականի թիվ 138-Ա
ք. Երևան

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 06-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 55 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց.*

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ ***Օրենք***) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, ինչպես նաև ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ Ե/01/03.1/819-25 գրությամբ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությունից (այսուհետ նաև՝ Հեռարձակող) պահանջել է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 24-ը ներկայացնել «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» լսողական ծրագրի 2025 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը:

Ի պատասխան վերոնշյալ գրության՝ 2025 թվականի հոկտեմբերի 24-ին Հանձնաժողովի քարտուղարության էլեկտրոնային՝ secretariate@tvradio.am հասցեին մուտքագրվել է «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության կողմից 2 էլեկտրոնային գրություն, որոնք պարունակել են հղումներ, իսկ մեկ էլեկտրոնային գրությունը պարունակել է նաև ուղեկցական գրություն՝ RA/MON/241025HRO1, 24.10.2025թ.:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից 2025 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 5-ն իրականացվել է վերը նշված գրություններով ներկայացված հղումներում ներառված նիշքերի (ֆայլերի) մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթների պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ, և 2025 թվականի նոյեմբերի 6-ին կազմվել է մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Արձանագրությունը կազմելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանք է հանդիսացել այն, որ ներկայացված հղումներում պարունակվող նիշքերը (ֆայլերը) չեն ներառում պահանջված՝ 2025 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրություններն ամբողջությամբ, մասնավորապես՝ բացակայում են ստորև նշված ժամանակահատվածները՝

07.09.2025թ. ժամը 13:16:24-13:17:40,
09.09.2025թ. ժամը 14:21:34-16:15:17, 16:25:43-16:53:31,
10.09.2025թ. ժամը 15:45:54-17:59:01, 18:14:12-23:59:59,
11.09.2025թ. ժամը 00:00:00-10:37:05,
16.09.2025թ. ժամը 20:02:08- 23:59:59,
17.09.2025թ. ժամը 00:00:00-10:19:23,
07.10.2025թ. ժամը 06:04:44-23:59:59,
08.10.2025թ. ժամը 00:00:00-14:50:44:

Հարկ է նշել նաև, որ ձայնագրությունների որոշ մասը զուգորդվում է աղմկային ֆոնի բարձր մակարդակով (խշշոցով), որը մի դեպքում դարձնում է տեղեկատվությունը լսողության համար դժվար ընկալելի, իսկ որոշ դեպքերում՝ ոչ ընկալելի:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2025 թվականի նոյեմբերի 6-ին կազմված Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի նոյեմբերի 6-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 55 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի նոյեմբերի 07-ի թիվ Ե/04/04.1/884-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 11-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանում:

Մասնավորապես, պարզաբանման մեջ նշված է, որ իրենց վերլուծության ընթացքում եկել են այն եզրակացության, որ աղմուկի աղբյուրը էլեկտրացանցում լարման տատանումներն են, որի հետևանքով շարքից դուրս էր եկել ցանցային երթուղիչի/ ռաութեռի իմպուլսային սնուցման բլոկը:

Վնասված սնուցման բլոկն առաջացրել էր էլեկտրամագնիսական տատանումներ, որը ազդել էր Radio Aurora-ից ազդանշանը գրանցող լոգերի ընդունիչ անտենայի վրա: Լոգերի էկրանին ձայնի ցուցիչները ցույց էին տալիս ազդանշանի առկայություն, ինչի հետևանքով մենք չէինք կարող ենթադրել, որ ձայնագրությունն ուղեկցվում է աղմուկով: Բացի այդ, երբ եթերը խափանվում է, լոգերը ավտոմատ կերպով ուղարկում է SMS ծանուցում ազդանշանի անջատման մասին, բայց նշված ժամանակահատվածում նման ծանուցումներ չեն ստացվել: Հեռարձակողը նշել է, որ վերջին ամիսներին լարման տատանումները լուրջ խնդիրներ են առաջացրել:

Ինչ վերաբերում է կորած ֆայլերին, նշել է, որ դրանց ընդհանուր ծավալը 42 օրվա ընթացքում գերազանցել է 350 ԳԲ-ը, քանի որ մենք նաև օգտագործում ենք հեռարձակման ձայնագրությունները մեր ներքին արխիվի համար և պահպանում դրանք .wav ձևաչափով: Բոլոր ֆայլերը փոխակերպվել են .mp3 ձևաչափի՝ էլ. փոստով և ամպային ծառայություններով փոխանցելու համար: Հավանական է, որ դրանցից մի քանիսը լիովին չեն փոխակերպվել կամ վերբեռնվել սերվեր:

Հեռարձակողը պարզաբանման հետ միասին ներկայացրել է կորած ձայնագրությունները միասնական ֆայլով /հղումներով/:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է Հեռարձակողի՝ 2025 թվականի նոյեմբերի 11-ի գրությամբ ներկայացված հղումում ներառված նիշքերի (ֆայլերի) մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրվել է, որ ներկայացված ձայնագրությունները համալրում են «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 6-ի արձանագրությունում նշված պակասող ժամանակահատվածները, սակայն միայն 2025 թվականի սեպտեմբերի 7-ի ձայնագրությունն է ամբողջությամբ լսելի, իսկ մնացած օրերի ձայնագրությունները զուգորդվում են աղմկային ֆոնի բարձր մակարդակով (խշշոցով), որը մի դեպքում դարձնում է տեղեկատվությունը լսողության համար դժվար ընկալելի, իսկ որոշ դեպքերում՝ ոչ ընկալելի:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

կարգավորող պետական մարմին՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերի»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն»:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական դրույթները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը լսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքի սահմանող դրույթները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2017 թվականի հոկտեմբերի 06-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ ք. Երևան, 100.7 ՄՀց հաճախականություն, լիցենզիայի համարը՝ N 236, գործողության ժամկետը՝ 06.10.2017թ.-06.10.2027թ.):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող պետական մարմին, Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է Հանձնաժողովի նախագահի կողմից գրավոր հարցման ձևաչափով:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

Հանձնաժողովն, իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս և հիմք ընդունելով Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի նախագահի 07.10.2025 թվականի գրությամբ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությունից պահանջել է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 24-ը ներկայացնել «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» լսողական ծրագրի 2025 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունները:

Հեռարձակողի համար լսողական հաղորդումների ձայնագրությունները պահպանելու պարտավորությունը սահմանված է Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով:

Հեռարձակողն, ի պատասխան Հանձնաժողովի նախագահի գրության, 2025 թվականի հոկտեմբերի 24-ին Հանձնաժողովի քարտուղարության էլեկտրոնային՝ secretariate@tvradio.am հասցեին է ուղարկել 2 էլեկտրոնային գրություն, որոնք պարունակել են հղումներ, իսկ մեկ էլեկտրոնային գրությունը պարունակել է նաև ուղեկցական գրություն:

Սակայն Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ Հեռարձակողի կողմից ներկայացված հղումներում ներառված նիշքերը (ֆայլերը) չեն ներառում պահանջված՝ 2025 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրություններն ամբողջությամբ:

Այսպիսով, «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությունը փաստացիորեն չի կատարել Հանձնաժողովի օրինական պահանջը և չի ապահովել Հանձնաժողովի նախագահի գրությամբ պահանջված՝ Օրենքով պարտադիր պահպանման ամբողջական տեղեկատվության տրամադրումը: Արդյունքում Հանձնաժողովը զրկվել է իրավասու վերահսկողական լիազորությունների իրականացման հնարավորությունից:

Վարչական վարույթի շրջանակներում Հեռարձակողը 2025 թվականի նոյեմբերի 11-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանում, ինչպես նաև նյութեր /հղումներ/՝ հայտնելով, որ ներկայացված նիշքերը պարունակում են կորած ձայնագրությունները միասնական ֆայլով և հանդիսանում են Հանձնաժողովի նախագահի գրությամբ պահանջված ժամանակահատվածի ձայնագրությունները:

Սակայն ներկայացված նյութերի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ դրանք ևս չեն պարունակում այն ամբողջական տեղեկատվությունը, որը պահանջվել է Հեռարձակողից. ներկայացված ձայնագրությունները համալրում են 2025 թվականի նոյեմբերի 6-ի Արձանագրությունում նշված պակասող ժամանակահատվածները, սակայն միայն 2025 թվականի սեպտեմբերի 7-ի ձայնագրությունն է ամբողջությամբ լսելի, իսկ մնացած օրերի ձայնագրությունները զուգորդվում են աղմկային ֆոնի բարձր մակարդակով (խշշոցով), որը մի դեպքում դարձնում է տեղեկատվությունը լսողության համար դժվար ընկալելի, իսկ որոշ դեպքերում՝ ոչ ընկալելի:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարչական վարույթի շրջանակում Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները և ներկայացված նյութերը /հղումները/: Մասնավորապես՝ ըստ Հեռարձակողի վերլուծության՝ աղմուկի աղբյուրը էլեկտրացանցում լարման տատանումներն են, որի հետևանքով շարքից դուրս է եկել ցանցային երթուղիչի՝ ռաութեռի իմպուլսային սնուցման բլոկը, և որ վնասված սնուցման բլոկն առաջացրել է էլեկտրամագնիսական տատանումներ, որն էլ իր հերթին ազդել է «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ-ից ազդանշանը գրանցող լոգերի ընդունիչ անտենայի վրա:

Փաստացի Հեռարձակողն ընդունել է, որ ներկայացված ձայնագրություններն ուղեկցվում են աղմուկով (խշշոցով), և այդ խախտումները, իրենց եզրահանգմամբ, առաջացել են էլեկտրացանցում լարման տատանումների հետևանքով:

Արձանագրում ենք նաև, որ Հեռարձակողի կողմից ներկայացված ձայնագրությունները, որոնք ամբողջությամբ կամ զգալի մասով ոչ լսելի են (ոչ ընկալելի), չեն կարող գնահատվել որպես Օրենքով սահմանված պարտականության պատշաճ կատարում: Տեղեկատվության նման տրամադրումը՝ նույնիսկ եթե միայն ձևականորեն, կարող է դիտվել որպես պահանջի կատարում, սակայն բովանդակային առումով չի ապահովում Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվության ամբողջականությունն ու մատչելիությունը, և հետևաբար չի կարող համարվել, որ կատարվել է Օրենքի պահանջը, և Հանձնաժողով է ներկայացվել համապատասխան հայցվող տեղեկատվությունը:

Այս պարագայում վարչական մարմինն իրականացնում է Օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթները, մինչդեռ Հեռարձակողի կողմից ներկայացված ձայնագրությունները լսողության համար դժվար ընկալելի են, իսկ որոշ դեպքերում՝ ոչ ընկալելի, և հետևաբար արձանագրում ենք, որ բովանդակային առումով պահանջված տեղեկատվությունը չի ներկայացվել:

Նաև հարկ ենք համարում նշել, որ Հեռարձակողը 2017 թվականի հոկտեմբերի 06-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ և քաջ տեղյակ է տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթներին և հետևաբար պարտավոր էր պահպանել Օրենքով սահմանված պահանջները:

Այսպես, հիմք ընդունելով վերը նշված փաստական հանգամանքները՝ ևս մեկ անգամ արձանագրում ենք, որ Հեռարձակողի բացատրությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և Հեռարձակողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

Կրկին նշենք, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը կարգավորում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (Հեռարձակողների), օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները, կանոնակարգում է հեղինակազորման, լիցենզավորման, ծանուցումների ներկայացման կարգը: Հանձնաժողովը տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող անկախ պետական մարմին է և իրականացնում է Օրենքով սահմանված իր լիազորությունները:

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությունը իր պատասխան գրությամբ չի հերքել այն փաստը, որ ստացել է Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ Ե/01/03.1/819-25 գրությունը, նշված փաստը հաստատում է նաև Հեռարձակողի կողմից վարչական վարույթ հարուցելու և դրա վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու մասին ծանուցման ստացման փաստը:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և վերոնշալ փաստական հանգամանքները՝ արձանագրում ենք, որ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությունը չի ապահովել Օրենքով պարտադիր ամբողջական տեղեկատվության տրամադրումը, որի ներկայացումը իրականացվում է Օրենքի համապատասխան դրույթներից բխող իրավական պարտավորության շրջանակում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 14-րդ կետերով և 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 9-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 27
ք.Երևան